

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ համար 8 ՄԼՃ.
» Գաւառաց » 10 ՄԼՃ.
Վեդամեայ և Պոլսոյ » 4 ՄԼՃ.
» Գաւառաց » 3 ՄԼՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 վրդ.
Հանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կըլլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 30 ՆՈՅԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլին 9 դեկտ.

Արեւիմ կոմսին յիշատակարար նո-
րէն սկսաւ:

Ատեանը վճռեց, որ եկեղեցական
աշխարհապարութեան վերաբերեալ
թղթոց ընթերցման միջոցին հասո-
րակութիւնը ներկայ չգտնուի, իսկ
դատին մնացեալ մասերուն ներկայ
դատուի: Պետական փաստաբանն
յետոյ ամբաստանադրին ընթերց-
մանն սկսելով, երկարօրէն բացատ-
րեց թէ Արեւիմ կոմսը Գերմանիոյ աշ-
խարհապարութեան և անոր արտա-
քին յարաբերութեանց վերաբեր-
եալ լաւըմթիւն ամենակարեւոր թուղ-
թեր վերաբերեալ է. և այս թուղթերն
երեք կարգի կը բաժնէ. Ա. անոնք,
որ կոմսը նախարարութեան պահանջ-
մանքն ետ տուած է. Բ. անոնք, որ
կոմսն իրեն սեփականութիւն կը հա-
մարի. և Գ. անոնք, որոց ինչ եղած ըլ-
լալը չգիտնալու յայտարարութիւն կը
նէ: Պետական փաստաբանն այն թուղ-
թերուն պաշտօնական բնութիւն ու-
նենալը հաստատելով յայտնեց թէ
Պիսմարք իշխանին ինքնագիրը նա-
մակները պահանջուած թուղթերուն
մէջ չեն. յետոյ Արեւիմ կոմսին լրագ-
րայ միջոցաւ ըրած քանի մը հըրա-
տարարութիւնները մեղադրեց,
ինչպէս նաեւ լրագրաց ոմանց հետ
ունեցած յարաբերութիւնները: Վեր-
ջապէս պնդեց թէ Արեւիմ կոմսն այն
թուղթերն ոչ թէ իր պաշտպանու-
թեանը ծառայեցնելու համար պա-
հած է, այլ կայսրութեան աշխարհա-
պարութեան դէմ նոր յարձակումներ
ընելու համար:

Կոմսին փաստաբան Տոքթոր Միւն-
քէլ ատեանին ձեռնհասութեան դէմ
առարկութիւն ըրաւ, բայց ատեանն
անընդունելի դատեց անոր առար-
կութիւնը:

Արեւիմ կոմսն իրեն եղած հարցա-
քննութեան մէջ ինքզինք անմեղ կը
յայտարարէ, առաջին հարցախոր-
ձին մէջ ըստմաները կը պնդէ, և պաշ-
տօնէ ելած դեպքանի մը վրայ ար-
տաքին դործոց նախարարութեան
իշխանութիւնը կը ժխտէ:

Պէրլին 10 դեկտ.

Այսօր Արեւիմ կոմսը դատողատ-
եանին մէջ Պիսմարք իշխանին առ
Արեւիմ կոմսն զրկած և անկէ ջնջուած
այլ և այլ նամակաց պատճէններ
կարգացուցան: Այն նամակաց մէջ
Պիսմարք իշխանը խտրու կը կշտամ-
բէ կոմսին գործերը:

Պէրլին 10 դեկտ.

Արեւիմ կոմսն հարցաքննուած ժա-

մանակ և վերջուած թուղթերուն
թուումն եղած միջոցին խիստ կծու
պատասխաններ տուաւ:

Իր փաստաբանն ալ խիստ դառն
կերպիւ և անձնականի դէմ խօսե-
լով քանիցս ի կարգ կոչուեցաւ: Պիս-
մարք իշխանէն դուրս շնամակաց
ընթերցումը խնդրելով, Արեւիմ կոմ-
սը խոյթիչ դիտողութիւններ ըրաւ:
Ասոր վրայ ատեանն ալ զլացաւ ա-
նոնց ընթերցումը:

Փարիզ 9 դեկտ.

Պուշ Տիւ Ռան դաւառէն պատ-
գամաւորութիւն մ'ընտրուեցաւ պա-
հանջելու համար որ հիւպատոսական
իրաւասութեանց վերաբերեալ դաշ-
նագրութիւններն անփութիւ պահ-
ւին իբրեւ անհրաժեշտ Արեւիմ
հետ իրենց ունեցած առեւտուրին:

Վաշինկթըն 8 դեկտ.

Արտաքին գործոց նախարար Պ.
Յիշի կողմէն վերջին փետրվար ամ-
սոյ մէջ առ Մատրիարի դեպքան Պ.
Բիւշինկ դուրս և այս օրերս հը-
րատարարութեան նամակ մը կըսէ թէ
կրանթ նախագահը Գուպա կղզոյն
անկախութիւնն հարկաւոր լուծում
մը կը համարի այս խնդրոյն, բայց դը-
րաւելու դիտարարութիւնը կ'ժխտէ:

Փարիզ 9 դեկտ.

Բրուսո—Գաղղիական պատերազ-
մին ժամանակ կարիպայտիկ հրամա-
յած զօրաբանակին վրայ քննու-
թիւն ընող յանձնաժողովը իր պաշ-
տօնն աւարտեց:

Պ. Բէռօի տեղեկագիրը կըսէ
թէ կարիպայտիկ Բրուսոյցոյ մօտե-
ցած ժամանակ առանց կռուելու
և քաջուկեցաւ իր բռնած դիրքե-
րէն որք կրնային պաշտպանուիլ: և
կռուելուն թէ այս բանն ընտրէ թէ
Գաղղիոյցի զօրավոր մ'ըլլար պատե-
րադմական ատեանի մ'առջև դա-
տաստանի կիսթարկուէր:

Աղէքսանդրիա 9 դեկտ.

Եւրոպացի և եգիպտացի սպա-
ներէ հրամայուած նոր ուղեւորու-
թիւններ ճանքայ ելան ասիոյ Նեղո-
սի, Տարֆուրի և Հասարակածին մէջ
դառնուած երկիրներն հետադառնուաւ:

Փարիզ 10 դեկտ.

Պ. Գարնո հանրապետականը ձախ
կեդրոնին դուրսըման նախագահ
ընտրուեցաւ:

Լոնդոն 11 դեկտ.

Պոլս. Բոսն. 44 5/16
Իտի. 1863 68
» 1869 53 7/8
» 1871 63 1/4—3/4
» 1872 84 3/8
» 1873 51 7/16
Նոր փոխառութիւն 13/16
Անգլ. Բոսն. 92 1/16

Լիւբլեք 10 դեկտ.

Բաւարիա Միալինկ—Օրէսն 7 7/8—8
» Ֆայր Տօլէրան 5—
Ծախուած 10000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձր. Մեծ—Եպարքոսին դըս-
անը յառաջիկայ ամենաթիւթեան առ-
թիւ Բարձր. Մայր Թագուհին ադա-
մանդեայ ծանրագին մասնի մ'ըն-
ծայ զրկեց հարսնացուին:

Պէնկալիի դաւառին մէջ Ժան-
տախտը բարորդին դադրած ըլլալով
այն ծովեղբ. քներէն եկած նաւերուն
վրայէն քառաթիւնան վերցաւ:

Խափանեալ ֆար տիւ Պոսֆոր
լրագիրը Բ. Դրան հրամանաւ նորէն
հրաւարակիլ սկսաւ:

Կըլսենք թէ Սամաթիա բնակ-
եալ Եւրոպացի բժիշկ մը ծովու ջու-
րէն աղ հանելու հնարքը գտել և
յաջողեց է, և շինած աղն ալ Սա-
մաթիոյ նոյարաւաճառները գնելով
կը վաճառեն:

Կը հաւատեն թէ այս աղը հան-
քային աղէ բնաւ տարբերութիւն
չունի:

Գաղղիական մէջ վերջին օրերս
յաճախ պատահած գիշերային դու-
ղութեանց մէջ նշանաւոր է հետեւ-
եալը:

Պ. Գ. Կաննէ հինգ օրէ ի վեր
բնակութիւնը Գաղղիական ամառա-
նոցէն Բերա փոխադրելով, ամա-
րանոցին պահպանութիւնը պարտիզ-
պանի մը յանձնած էր, որ պարտիզին
ծայրը քէօշիկ մը մէջ կը պառկէր:

Երկուշաբթի իրիկուն Պ. Գ. ի որ-
դին Գաղղիական երթալով, բարեկա-
մի մը տունը ճաշելէ ետեւ կենէ իւր
տունը կերթայ, և երբոր դուռը
բանալ կուգէ, կը տեսնէ որ կղզան-
քը կոտորած էր և դրան ետեւ ծա-
նըր բաներ դրուելով փակուած: Չը
կրնար ըստալ, պատահանէ մը
ներս կը մտնէ և զարմացմամբ կը
տեսնէ որ տանը բոլոր կարասիները
բակին մէջ յղուած և խնամով ծրար-
ւած էին: Վերի յարկն երկուշաբթի
ներս մը մէջ փառաւոր ճաշի մնա-
ցորդներ կը տեսնէ: և հետզհետեւ
զարմանքն ու աղքատութիւնն աւելա-
լով երբոր իր ննջելու սենեակը կը-
նէ, կը նայի որ իր անկողնին մէջ մարդ
մը կար պառկած: Իսկոյն մարդուն
վրայ ինկալով անշարժ փեճակի մը մէջ
կ'ընէ զայն, և ստիպելով ամեն բան
զրուցել կուտայ:

Մարդը, որ Պ. Գ. ի տան հին
սպասարաններէն մին է եղեր, թա-
թալացի ընկերի մը հետ առնը
պարպելու խորհուրդ ըրեր են և ե-
րեք օրէ ի վեր տանը մէջ դեռեղուե-
լով, կարասիները փոխադրելու պատ-
րաստութիւն կը տեսնէին: Սակայն
ընկերը Պ. Գ. ի ներս մտնելի իմա-

ՊԱՅՄԱՆՔ

Դուռն զայցած լրագրաց հան ու
ձախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լիս, Չինիլի խան, Մասիսի գրասեն-
եակը:
Համբու ձախքը չվճարուած նո-
սակ չընդունուիր:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻՆԷ

27 նոյ.	ուրբաթ իրիկուն	49.18
28 »	շաբաթ առաւօտ	49.12
	բացուեցաւ	49.9
	կէս օր	

Կ. Պոլիս 29 նոյ.

Սոսիէթէ մէնէրարի բաժինք Անդր. Պ. 8 42	
« փոխանակութեան »	5.26
Կ. Պոլսոյ Պանքային »	6.10
Բրէտի Ժէնէրալ »	11.13
Բրէտի Օսթրո—Թիւրք »	

Երկաթուղեաց հին	Յը.	125 4/2
Փոլս. 1863	»	344
» 1865	»	350
» 1869	»	275
» 1872	»	85
» 1873	»	262
Թրամուէյ	Օսմ. իր	4 90

ԸՆԹԱՅՐ ԴՐԱՄՈՑ

29 ՆՈՅԵՄԲԵՐ

Անգլ. Բոսն.	440.25
Նաթիլ օր ռոկի »	87.32
Իմալ Բոսն. Ռուս »	89.42
Դ. Բրիտ. »	54.25
Հինգ Գրանք »	—
Հինգ Գրանք »	404.45
Պոլս. »	428.40

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ն.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ը.

Երեւոյ փոխանական Ժողովը շատ կըսի-
րեմ և անոր գործութիւնը շատ օգտա-
կար կը ճանչնաւ մանաւանդ ապագային
համար: Որ և է աղգային հաստատու-
թեան օգտակարութիւնը միայն ա-
նոր ներկային մէջ մատուցած ծառա-
յութիւններուն վրայ պէտք է չա-
փել, այլ միշտ անոր ապագային մէջ
մատուցանելիք ծառայութիւններն
ալ ի նկատի ունենալու է: Որ և է
աղգային հաստատութիւնն ապագա-
յին մէջ աղգօգուտ ծառայութիւն-
ներ մատուցանելու դիրքի մէջ դը-
նելու, ինչպէս նաեւ ներկային մէջ ա-
նոր թշնամիներուն ձեռքը զէնք չը-
տալու համար, ամեն անոնք որ աղ-
գային յառաջագիմութեան կը բաղ-
ձան և զայն իրենց մտածմանց և ջա-
նից առարկայ ըրած են, պարտական
են աղգային հաստատութեանց թե-
րութիւններն ուշի ուշով քննել և
պէտք եղած դարմանները ցուցնել:
Երբ աղգի մը մէջ այս սկզբունքին
համաձայն խորհող կամ գործող մարդ
դիւ չկան կամ համեմատաբար սա-
կաւթիւ են, Աղգ. հաստատութիւնը

զի ըստ գործութեան ընդհանուր օրինաց երեքին անգամը կարեն բազմապատկանել զՍտեան (կողմնակա) . և զի թէ ի Սինոդի կան մտապահ երեք անգամը , որք կա- բեն տալ զվճիւռ ամենայն դործոց , թէ ըստ այսմ չիք ինչ խափան կամ դադա- րուան ի ներքոյ որոշութիւնն Սինոդի և հե- տեաքար՝ չլինելն յարած ամ ի Սինոդի բանալի տեղ անգամաց , է այնպիսի խան- գարուան Պօթմէնիցի , որ յիսկական էութիւն իւրում ոչ կարէ կոչիլ խանգա- րուան , վասն զի նա՝ (այսինքն խանգա- րուան) եղբայրակէ յինքեան և ոչ ամէ իսկ զհետ իւր զորովորի և իցէ զվատ հետե- աանա . այլ ի վերայ այսր ամենայնի դար- ձեալ կարէ լրանալ սահմաններն թիւ ան- դամաց , երբ ի յայտ դայցեն արժանաւոր հոգեւորական անձինք , որք այժմ չիք . ուրեմն չիք կանոնաւոր և օրինաւոր հիմն վերադրելոյ ինձ զխանգարում Պօթմէ- նիցի . Այսու ամենայնիւ վերաբերելով զրանն առ խանգարումն յինքալ Պօթմէ- նիցի , ես ի հետեւումն պատասխանեաց Ձերոց յինչն ըստ այսմ առարկայի հար- կաղրեալ դատելով ցուցանել , թէ Բարե- ինն խանգարեալ է այն վերաբերու- թեամբ առ իս , և է դատաւիճակն զ28 պար- բերութիւնն այն իսկ Պօթմէնիցի , զորմէ ես արդէն զրեալ եմ Ձեզ . Բ . զ34 պար- բերութիւնն համառակ որոյ կամ եղև Ձեզ հազարդէլ պարոն Ղենեկալ Յիւստանտ Մուրափիւնի(1) առաջարկել առանց խնդ զիտութեան ի հաստատութիւնն զհոգեւո- րական անձինս յանգամանակութիւն Սի- նոդի , զորմէ նոյնպէս ի հետեւումն դրու- թեան Նորին բարձր գերազանցութեան՝ ես պատասխանեցի պատշաճ հանգամա- նայ դործոյն վասն հազարդէլ Ձեզ . Գ . զորոյր պարբերութիւնն այսր Պօթ- մէնիցի , նաև յայտնի ծանուցմամբ իրա- լանց՝ կոչման և բարձր աստիճանի խումբ յատկացելոյ , զորմէ ես խոստացայ նորին բարձր գերազանցութեան Նիկիոյ Նիկի- օսիցի(2) հազարդէլ յիւրումն ժամանա- կի և ցուցանել ի դրաւոր վկայութիւնն , այն է ի գրութիւնն Ձեր առ իս , յորս դուք , պարոն նախարար , վերաբերելք առ իս՝ որպէս առ ուղղակի և անընդմի- ջական ստորագրեցեալ Ձեզ աստիճանա- ւոր . քանզի ի հետեւումն այն ինչ դան- դատանաց , հաճիք զրեւ առ իս պայտէս . « հասուցանել ինձ զըստարութիւնն » . այլ կարճեմ թէ չեմ ես որպիսի և իցէ չնչին քաղաքագետ .

Եւ այսպէս նախ քան զամենայն պարտ է , զի նախորարն արդարադա- տութեան (իւստիցի) կամ Վիկար Նի- կիտի Պանին , լուծանիցէ զորհնաղիտա- կան (իւրիտիտական) հարցմունս Ա . դուս- թի՝ արդեօք ծայրապոյն Պատրիարք-Կա- թոլիկոսն ամենայն Հայոց բովանդակ աշխարհի՝ ինքնին անձամբ՝ յուղից և յա- նընդմիջական ստորագրութեան տեսան նախարարին ներքին գործոց , 2 . կարճ և յիւրաքանչեւ է արդեօք նա , պարոն նախարարն , պահանջել ի զիտաց ինքեան կաթողիկոսի զբացատրութիւնն այսպի- սի ոճով՝ արտասանեալ « հասուցանել ինձ զըստարութիւնն » , կամ թէ 3 դ . կաթողիկոսն անձամբ անձինն ոչ գտանի յուղից և յանընդմիջական ստորագրու- թիւն նախարարին , ուստի ըստ այսմ նախարարն կարէ և պարտի պահանջել ի կաթողիկոսին ոչ զըստարութիւնն , այլ միմայն զծանօթութիւնն , քանզի ի զիտաց օժեկոց զըստարութիւնն կարէ պահանջել , որպէս ինձ գտնէ թուի , միմայն թողաւորն և անուանական նու- բին հրաման :

Ահա՛ ողորմած տէր , առ իմ որ զըր- կեաց զիս ի հարաւորութենէ անտի պատասխանել Ձեզ առ ամենայն դրու- թիւնն Ձեր , քանզի պարտաւոր գիտով արբութեամբ պահպանել զիրաւոցե- եայն կոչման և բարձր աստիճանի խումբ զիրաւուն և զարտօնութիւնն : ես չկա- բեմ , նաև չունիմ իսկ զիրաւուն թոյլա- արել զի աւանդեալն ինձ աւելի քան թէ հնդկաք միլիոնօք աղգի և կամք կայսեր՝ Անուն ծայրապոյն Պատրիարքի Եջմիածնի և կաթողիկոսի ամենայն Հայոց լիցի ար- բարեբեալ նուստարութեամբ : Ըստ այսմ՝

- (1) Փոխարքայ Կովիտուս .
- (2) Նոյն փոխարքայն է :

երբ վերադառնալ հարցմանց տացի պար- տուպառնալ եղանակաւ լուծումն , և ես ստացայց զայնմանէ՝ զծանօթութիւնն , յայնժամ և պատասխանեցի Ձեզ , պա- րոն նախարարիդ , որպէս արժանն է պա- րտութեամբ և յիմոյս կողմանէ պատշա- ճաւոր արտայայտութեանց , զորս յար- տաբերելն այժմ ես զժաւարանամ , վասն զի այժմ չգիտեմ՝ յայտարարութեամբ (1) արդեօք թէ հազարդէլութեամբ կա- բեմ և պարտիմ ես գրել առ Ձեզ :

Հրեմայ Բարե-

... Երեմայ .

Կրօն . Ժողովոյ Նի հրատարակու- թիւնն տեսա՛մ Պաշտօնական ծանու- ցումը հարկադրեց զմեզ նամակիս հետ դանուամ հրատարակելի գիրս առ Մեծապատուութիւնն ձեր զըր- կելով խնդրել որ յանուն ճշմարտու- թեան և արդարութեան բարեհա- ճիք ձեր պատուական լրագրոյն մա- տակայ թերթին միջոցաւ հրատարա- կել անկողմնասիրութեամբ , որն որ Ձեր բնական յատկութիւններէն մին է : Վստահ լինելով որ մեր անձիննը կատմամբ եղած Պաշտօնական ծա- նուցման մէջ սղորդեալ մի քանի սը- խաղումները միայն ուղղելու նպատա- կաւ մեր այն յօդուամը հրատարա- կելու շնորհ կընէք , և որոյ համար իմ շնորհակալութիւնս կանխելով՝

Մնամ Ձեզ յարգանք

Խորեն Բահաւայ Գեղեկեան

24 Նոյեմբեր 1874

Խաղիւտար Նոր-Թաղ

... Խաղիւտար

Ազգային Վարչութեան Կրօնական Ժողովոյ մեր նկատմամբ մի պաշտօնական ծանուցումը հրատարակեալ տեսանք ազ- ցային լրագրաց ունանց մէջ , որով կը յայտարարելք մեր պատժոյ արժանի , լայց առ այժմ յատենի ժողովոյ յանդի- մանեալ ըլլալ :

Կրօն . Ժողովոյ նոյն պաշտօնական ծանուցումը պարտաւորեց զմեզ ակամայ կամք դարձեալ ի հրապարակ ինքել , և նոյն իսկ պաշտօնական ծանուցման մէջ սղորդեալ մի քանի սխալումներն ուղղել :

Նախ՝ մեր հարցումներն երեք էին , որոց երկուքը Կրօն . Ժողովոյ և երրորդը դատ խնդրոյ մը կը վերաբերէր . այս վերջնոյն վրայ բնաւ յիստակութիւն մը չկար . առաջին երկուքին միայն կարեւ- րութիւն տալով՝ զմեզ իւր ստեանը հը- րաւորելք է :

Երրորդ՝ մենք մեր որակաւթիւնը չխոստովանեցանք , այլ՝ Կրօն . Ժողովոյ ազգային խաղաղաց համար արդէն հը- րատարակեալ օրէնքը չդիտարկով՝ հըրա- պարակա առ ինքն հարցում ուղղած ըլ- լալովս յայտնեցինք և խոստացանք որ յետ այստիկ խի՛թն ունենանք հարցում ընելու , ուղղակի Ժողովոյն զինքն :

Երրորդ՝ Կրօն . Ժողովոյ մեր երեք հարցմանց պատասխանը տալն ետքը առաջարկեց մեզ որ Հայրենիք լրագրոյն մէջ հրատարակելի նամակին իւր պատ- ճէն Ժողովոյն ցոյց տուած զիրք ամենայն ճշդութեամբ օրինակելով մեր ստորագ- րութեամբ հրատարակել տանք . բայց մեզի տրուած պատճէնին մէջ մեր երեք հարցմանց պատասխաններն և ոչ մին նշանակուած էր . մենք նոյն պատճէնին իմաստը նոյնը պահելով և Ժողովն ըն- դունած պատասխաններս միայն աւել- ցնելով՝ հրատարակել տուինք . յորմէ յայտնի կը տեսնուի որ խոստանալու- եղած չեմք :

Ասոր վրայ Կրօն . Ժողովոյ դարձեալ զմեզ իւր ատենը հրաւիրելով բացատ- րութիւն պահանջեց մեզմէ . մենք մեր կողմանէ ոչեք եղածը պատասխանեցինք , բայց ոչ թէ՛ « եկեղեցականի մը անվա- յել ընթացիւք Ժողովոյն զէմ վարուելով » :

(1) « Զայտարարութիւնն » զրէ միայն ստորագրեալն առ մեծն , այլ « հաղոր- դարարութիւնն » զրեն հաւատար միմեանց պատուով անձինք կամ դատաստանա- տանք :

ինչպէս կըսէ պաշտօնական ծանուցումը , ի վերջոյ ժողովը ծանուց մեզ թէ՛ Ամեն . Սրբազան Պատրիարք Հայրը ժողովոյն կարծիքը ձեզ պիտի յայտնէ . և ոչ թէ « ժողովը զմեզ յանդիմանեց , » ինչպէս պաշտօնական ծանուցումը կըսէ :

Զորրորդ՝ Գեր . Պատրիարքական փոխարք . Հայրը նոյեմբեր 2 ամառ- թեամբ նամակ մի խրկած էր առ մեզ յայտնելով թէ՛ ունի ինչ հազարդէլ մեզ . առ որ անձամբ դայցինք և Նորին Գերա- պատուութեան առաջարկութիւնը լու- ցինք ոչ յանուն Ամեն . Սրբազան Պատ- րիարք Հօր , ինչպէս պաշտօնական ծա- նուցումը կըսէ , այլ՝ յանուն Գեր . Նար - Պէյ Սորին Սրբազանի . և Գեր . Փո- խանորդ Հայրը ոչ թէ՛ « զմեզ խրատեց որ Ժողովն ներողութիւն խնդրենք , այլ՝ առաջարկեց մեզ մտերմորաւ որ Ժողովոյն մեր վրայ ունեցած սխալ կար- ծիքներն ուղղենք . իսկ մենք Ժողովոյն պատուոյն ու արժանաւորութեանը զէմ զործած չըլլալիս և զորեւրեւ ալ դի- տուած չունենալիս յայտնելով մեկնե- ցանք :

Նոյեմբեր 19՝ երեքշաբթի օրը՝ Ա- մեն . Սրբազան Պատրիարք Հօր կողմանէ եկաւ առ մեզ ի ձեւաւորան Սրբ . Նիկիի վարդապետը , որն որ Նորին Բարձր Սրբազնութեան կամքն ու հրամանը հա- ղորդեց մեզ , այն է՝ զիւր մը գրել առ Կրօն . Ժողովն : Սենք Ամեն . Սրբազան Պատրիարք Հօր յայտնեցինք նամակաւ թէ՛ իրեն որդի Հայաստանեայց եկեղե- ցւոյ որ և է՝ Ազգային Վարչութեանց ըմ- բոստ , անարդող , ևն . դառնալու գի- տումն բնաւ ունեցած չեմք մեր կենաց ընթացից մէջ . և թէ՛ կարող եմք ճանչ- նալ ներկայ , անցեալ և ապագայ վար- չութեանց իշխանութիւնը , պատին ու արժանաւորութիւնը . ինչպէս արդէն մեր վերջին հրատարակութեամբ հրա- տարակած էինք թէ՛ Կրօն . Ժողովոյ գի- մաղ իր՝ գանուիւր մեր մտքն անդամ ան- ցած չէ :

Աւելորդ չեմք համարել յիշել նաև թէ՛ Կրօն . Ժողովոյ մեր նկատմամբ բրած անօրէնութենէն ակնեւ կը տեսնուի որ մեր միւս հարցումներն արդար և իրա- ւացի ըլլալով՝ մեր զրպարտէլ ըլլալը չէ՛ հաստատուած . և կը ցուինք ըսել որ Կը- րօն . Ժողովն ազգային խաղաղաց հա- մար միայն հրատարակեալ օրէնքը չլիտ- նալովն ինքն հարցումը մեր հրապարակաւ առ ինքն հարցումներն ուղղելու ծանր հա- մարած է , և տակաւին մեր այն երկու հարցմանց առարկայ եղող « ի նպատա- բաւին և Ս . Խաչի 8 : Գրիգոր քահանային ի սրճարան նստելու խնդիրներն անշաւն համարուելով չեն քննուած և արժանը անօրինուած :

24 Նոյ . 1874 Նիճնուէր պաշտօնեայ Խաչ . Նոր թաղ Հայաստ . եկեղեցւոյ Բահաւայ Խորեն Գեղեկեան

... Խաղաղիւր Տէր .

Յօժարեցեք ի ներքոյ գրեալ աղ- դը ձեր պատուական թերթին յա- ռալիկայ թուովը հրատարակել

Ի Դիմաց Թաղ . Խորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Հ . Մաթաւէան Կաթողիկոս Կ . Բաթաւէան 29 Նոյեմբեր 1874 Ի Թաղ . Խորհրդարան Եկեղեցւորի

Ե . Գ . Գ .

Թողիւ Ս . Առաքելոյ Եկեղեցւոյ ատենապետութեան առ թիւ՝ Բարձրա- շնորհ Ս . Պատրիարք Հայրն հրաւիր- ւած է յառաջիկայ կիւրակէիս Ս . Պատարագ մատուցանել և հոգեւո- րապէս մխիթարել Ժողովաւորը : Ուստի խորհուրդս ի վրայ թալ հը- րաւէր կարողաւ բարեւեսը աղբայնոց որ այս հոգեւոյ համբէսը պատուել , բարեհաճին :

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ ԹԵՐԹ ՄԸ ԵՐ ՀՐԱՏԱՐԱՅԻՆԻ ԱՄԷՆ ԱՄԻՍ

Տղայք պիտի փախաքին առնել

Տղայոց Աւետարները , եթէ անդ ամ մի աւեսեն թէ :

Անոնք որ 1875 տարւոյն համար բաժանորդ կը դրուին այս թերթին պիտի ընդունին աւելի քան հարիւր յօդուած կարգաւոր արժանի , հա- դերձ 50 կամ 60 դեղեցիկ պատկեր- ներով :

Բաժանորդութեան տարեկան դի- նըն է մէկ քառորդ մէճիւրէ (5 զրչ մաքուր ստոյն) :

Խրեց անուանը 10 կամ աւելի օրինակ աւանդները պիտի ընդունին հարիւրին 10 զեղչ :

Բաժանորդագրութեան ժամանա- կըն հիմա է :

Բաժանորդագրութեան տեղն է Պօլիս , Ֆինճանճըլլոր փողոց , Ամերի- կացւոց խոն , 17 թիւ սենեակ :

ԹԱՏՏՐՈՆ ՕՍՄԱՆԻԷ

ԿԷՏԻՒ ՓԱՇԱ

Վարչութիւն Թ . Էֆենդի Վարչութիւն 1874 Նոյ . 30 շաբաթ գրէր ժամ 3 ԱՐՏԱՐՈՑ ԿԱՐԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ Առաջին անգամ ներկայանալի ԴԻՄԱՅԱԿ ԲԼՈՒՐԸ Թատրերգութիւն Նիճնուէր արարաւ և յիշմն պատկերս

Հեղինակ Թարգմանիչ Էօմէն Սիւ Պ . Ս . Ղուկասեան ՊԱՐ ՎԵՆԵՏԻԱՆ Սոլաքական դին Թատրերին զրօստարանը մինչեւ առա- լաւ բաց է :

ԹԱՏՏՐՈՆ ԲԱՐԵՍԻԱՐԸՑ

ՅՕՐՈՒՊԻԻԿ

Վարչութիւն Թ . Էֆենդի Վարչութեան 1874 դեկտ . 1 կրակի գրէր ժամ 2 1/2 Գ . ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ ԲԱՍԱՆՈՐԻԱԳ- ԲՈՒԹԵԱՆ ՀՈՒՓՈՒՄԷ

Ողբերգութիւն ինչնդ արարաւ Հեղինակութիւն Խմբաւորէ Էֆ . Խաչեան ԹԱՆԲԹՈՐԹԻ ՎԻՃԱԿԱՅԱՑՈՒԹԻՒՆԸ Կատակերգութիւն ի մի տարար Սոլաքական դին

ԻԼԸՆ

Բախմանը տաքիւր տէլիւրմէնիտէ վաղ օրուամբ լուգէր լուգումի օրու պիւնաքառայէ գծերան հէր թաղընը- յըլա միւքեմէլ տէօրա չիֆթ թաշ 1085 ատէտ ինկիլիզ իրաւընա օլա- րաք թալիսի տանի բոսմիլին իբնճի փէնճէնալիս կիւնիւ գարալը գաթի- սի վերիլէճէ յինտէն , առհա աշաղը ֆիւտթիլ իթա իթմէյէ թալիւ օլան- արըն եէվմի մէղըլըրաէ Տարի Շու- րալի ապքէրիլէ կէլմէլէրի 27 Թըլըլինի տան 1874 Պաղը Սէրասքէրի

Թօփանէի ամիրէ իչին լուղումի օլու պիւնաքառայէ գծումլան 900 թօլի վալաթմուրիալըք քեաղըրընն պէհէր գըլէսի 12 զրուշա վէ 900 թօլի գօլմնըք քեաղըրընն պէհէր քըլէսի 13 զրուշա թալիսի էօհտէ- սինտէ օլու պիւնաքառայէ էվիլըլըլու- մինին պէլինճի փէնճէնալիս կիւնիւ գարալը գաթիսի վերիլէճէ յինտէն , առհա աշաղը ֆիւտթիլ իթալընա թալիւ օլանլարըն եէվմի մէղըլըրաէ , Տարի Շուրալի ապքէրիլէ կէլմէլէրի 27 Թըլըլինի տան 1874 Պաղը Սէրասքէրի

